

ՅԱՅՍԵՐԱԿ

ՊԻՏՈՒՄ ՊԻՏՈՒԼԵՐԸ

ՀԵՏՈՒ 7:

ՓԵՏՐՎԱՐ 1 · 1854:

ԹԻՒ 74:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ

"Տէրոջը յուսա՛ ու բարութի՛ւն ըրէ՛" Երեւ · 17: Կռապաշտի մը համեստ խստովանութիւնը Եր · 20: Առերք Եսոռածային ծագմանը վրայ եղած փաստերուն համառօտ բացատրութիւնը Եր · 20: Առատաձեռն Քրոց Եսոռածային ծագմանը վրայ եղած փափոխութիւնները Եր · 24: Ինաւ գոհ չերքիսոնեայ Եր · 23: Արևմտեան Հնդկաստանի մէջ եղած փափոխութիւնները Եր · 24: Ինաւ գոհ չերքիսոնեայ Եր · 26: Կառամնելի տեսաբան Եր · 26: Հարաւային Արքիկէին մէջ առկաները Եր · 27: Ուտելեր ներու և մարտղութեան վրայ Եր · 29: Ալետուններուն մէկ պատմութիւնը Եր · 30: Անսովոր խմելիք մը Եր · 30: Անսովոր խմելիք մը Եր · 30: Անսովոր խմելիք մէջ գտնուած բազմամարդուն — Արևելեան խալիքաներէն մէկը Եր · 30: Անսովոր օր մը առաջ Եր · 30: Անսովոր խմելիք մէջ գտնուած բազմամարդուն — Արևելեան խալիքաներէն մէկը Եր · 31: Անժին Երիտանիայի նաւատորմիջը Եր · 32: Յանկ նորատիպ գրոց Եր · 32: Յանկ նորատիպ գրոց Եր · 32: թիւն ու տարբեր կրօնքները Եր · 31: Անժին Երիտանիայի նաւատորմիջը Եր · 32: Յանկ նորատիպ գրոց Եր · 32:

ԱՏԷՐՈՉԸ ՅՈՒՍԱ՛ ՈՒ ԲԱՐՈՒԹԱ՛ԿՆ ԸՐԵ՞"

Տարւոյն սկզբնաւորութեան ատենը և մեր գլխաւոր խորհրդածութիւններէն մէկն ալ ասէ թէ՛ մենք ըստ մեծի մասին չնկք գիտեր հիմա թէ ինչե՞ր պիտի պատահին արդեօք ներկայ տարւոյս մէջ: Երբոր միտքերնիս կը բերնք՝ թէ բնաւ մէկ տարի մը չանցնիր, որուն մէջ մեծամեծ փոփոխութիւններ չըլլան թէ մասնաւոր անձանց և թէ զանազան ազգաց և ժողովրդոց նկատմամբ ։ Երբոր կը մտածենք թէ երկինքը խխոտ պայծառ երեցած ատենն ալ մէկէն ի մէկ կրնայ փոխութիւն շատ անգամ, թէ մասնաւորապէս չիւանդութիւնները և մահը կը տիրեն ամէն կողմ, և թէ՛ ոչ մենք ու ոչ բարեկամնենիս անոնց գէմ դնելու ապահովութիւն մը կրնանք ունենալ, անկարելի է որ աս բանը չարցըննենք թէ՛ աս տարիին մէջ ալ ինչե՞ր պիտի ըլլան արդեօք թէ մեզի նկատմամբ և թէ մեր բարեկամացը, թէ մեր երկրին և թէ Եսոռութոյն: Վրու պարագաներդ, յօյսերդ ու փափաքներդ ինչ կ'ըլլայ թող ըլլայ ովանիւ ընթերցող քեզի խորհուրդ կու տամոր " Երոջը յուսա ու բարութիւն ընես " ։ կամ թէ այսպէս ըսեմ ։ քու պարտաւորութիւններդ հաւատման կատարէ, և անոնց չետեւանքներուն համար ալ Տէրոջը յուսա:

Կարելի է որ աս յօդուածը կարդացող ներէն ոմանք՝ ալեորեալ ծերութեան հասակն մէջն են, և որոնք մարդկային կենաց սոլորական սահմանէն ալ անդին անցած են արդէն ։ ուստի ամէն կողմանէ իրենք յայտնի վկայութիւն ունին որ՝ աս կեանքէս բաժնուելու ատեննին մօտ է: Եւ գրեթէ անկարելի պէս բան մը կ'երեայ օր չարցըննեն թէ՛ արդեօք ասիկա մէր վերջնա տարին չկրնար ըլլալու և կարելի չէ՞ օր իրենց մինչև հիմա անցուցած կեանքերնուն այն կէտը հասած ըլլայ, որ ասկէ առջի բոլոր ժամանակներն անոր պատրաստութեան մը համար եղած էր: Ոչ դուք՝ իմ ծերունի բարեկամներս, ոչ ես, ու ոչ ալ որ և իցէ մահկանացու կրնայ ասոր պատախանն մը տալ ։ ասիկա մէկ գաղտնիք մըն է որ՝ ամենիմաստն Եսոռուած չկամեցաւ մեզի յայտնել: Իայց մէկ բան մը կրնամ ըսել որ բոլորվին հաւատարմութեան արժանի է ։ և Տէրոջը յուսա ու բարութիւն ըրէ՛ և ամենին վախու բան մը չես ունենար: Յաւիտենականութեան համար ընելու բոլոր գործերդ տակաւին ձեռքդ չէ՞: Զես կրնար պարտը կել աս ահարկու ճշմարտութիւնը, բայց և այնպէս յուսահատել ալ պէտք չէ ամենեին, քանի որ հոգիդ վագդ է և փրկութեան հրաւերը բու աշուներուդ առջին են և ականջներուդ ալ համենին: Յայսդ գիր Յիւ լ 2

սուս Վրիստոսի վրայ, իր քաւշական արեանը, իր սրբացուցիչ չնորհացը, իր հաւատարիմ խոստմանցը, և թէ որ աս տարւոյն մէջ մաշը քու դէմդ ելք, ամենելին պէտք չէ որ անեկէ վախնաս + վասն զի երկնաքը առաջնորդող ճամբայ մնէ է: Վրիստոնեայ ըլլալ կը դաւանիս, և կը վախնաս թէ՝ քու յօժարութիւններուդ թուլութենէն և հոգեոր խաղաղութեանդ աւրուելէն, որ տարիքդ առնելուդ կարելի է որ վրադ եկած է՝ դուն մէկ սուտ յոյս մը ունեցած ես մինչեւ հիմա: « Տէրոջը յուսաւ ու բարութիւնը ըրէ » և վերջապէս քու աս մտատանչութիւնդ պիտի փարատի. թող տարին քու դէմդ հանէ ինչ որ կ'ուզէ. դուն անսնց ամենն ալ գիմաւորելու պատրաստ պիտի ըլլաս: Թէ որ տարւոյն վերջը համնելով քու տկարութիւններուդ բեռը խիստ ծանրացած գտնես, կամ թէ որ տարին չմնցած շատ առաջ՝ բարեկամներդ քու վերջն հրաժարականդ լին, ասոնցմէ ո՞րն որ ալ ըլլայ՝ քեզի համար միշտ աղեկ է: Աստուած քեզմով պիտի փառաւորուի, ու դուն ալ Աստուծով պիտի երջանիկ ըլլաս:

Տարակոյս չկայ որ անանիներ ալ կան՝ որնք աս ներկայ տարւոյն հետեւութիւններուն տիսուր դուշակութիւնները հիմակուլնէ կ'ընեն, որովհետեւ գիտեն թէ հիւանդութիւն մը անիմանալի իերպով մը արդէն իրենց կազմուածքին վրայ տիրած է, և չեն ալ գիտեր թէ ինչ վասնդաւոր վախճանի մը պիտի հասցնէ զերենք, տարւոյս մննալէն առաջ: Բայց ես աս կ'ըսեմ՝ թէ ամեննեին վնաս չունի քեզի ինչ և մինչեւ ուր հասցնելը ։ թէ որ աս աստուածային պատգամը պահէս: Աստուած ինչ որ քեզմէ կը պահանջէ՝ միայն ան ըրէ, և գալու հետեւութիւններուն համար՝ իրեն յուսաւ հաստատարմութեամբ: Հիւանդութիւնը չկրնար քեզի վեսա հասցնել, մահը անդամ վնաս մը չկրնար ընել. չէ, այլ մանաւանդ ամենամեծ բարիք կ'ըլլայ քեզի, որովհետեւ քեզի Երկինքը վաստիկ կու տայ՝ թէ որ քու յայսդ Տէրոջը վրայ դրած ես ու բարութիւն կ'ընես: Տարին կարելի է որ տիսուր տեսաւ բաններ հանէ առջեւդ. անանկ վշտակի տեսաւ բաններ՝ որ բնաւ կեանքիդ մէջ տեսած չես. բայց ասոնց ամենէն դառն երկցածներուն ալ, Աստուծոյ վրայ հաւատոք ունենալն ու իրեն

չերմեռանդ ծառայութիւն ընելը, ամենազօրաւոր գեղթափի կ'ըլլան:

Տարակոյս չկայ որ կան անանիներ ալ որ իրենց հոգիներնուն վրայ կը մոմտան, և տակաւին Աւետարանին համաձայն կեանք չեն վարեր. և որոնք կը վախնան որ չըլլայ թէ աս տարի բոլորպին ետ ետ երթարով վերջապէս անհոգ ըլլան իրենց հոգեոր վիճակին վրայ, և անանկ ներուն կարգը անցնին իրենք ալ, կամ թէ աս կեսնքէս ելլերով՝ անցյս կօրսուեան մը մասնութին: Ասանիներուն պարզապէս կ'ըսեմ. աս բաններուն վրայ հոգ ընելու և մոմտալու իրաւունք ունիս: Ասան զի քու վիճակիդ մէջ դտնուած մարդոց շատերուն և ան վտանգները պատահած են՝ որոնցմէ որ դուն հիմա կը կասկածիս: Ո՞եկ Ճամբայ մը կայ միայն քու աշպահովութեանդ համար, և ան ալ Աստուծոյ յուսաւ ու անոր նազանդին է: Աս հիմակուան քու սրտանց զբացած համոզունեւքը, Յիսուս Վրիստոսի հաւատալու՝ քու հոգւոյդ փրկութեանը համար, յարմար նախապատրաստութիւններ են: Անոր ամենաբաւական արգեանցը վրայ դիր յայսդ, և ապաշխարութեան արժանաւոր պտուղ բեր. կամ թէ ուրիշ խօսքով հասկցընեմ. Քրիստոսի խօնարհ և նալապանդ հետեղն եղիր. և տարին՝ չկրնար անանկ բան մը քու գիմացդ հանել, որուն վրայ խորհրդածութիւն ընելովդ վախ մը գայ քեզի: Բայց թէ որ հիմակուան եղածիդ պէս շարունակես աս տարուան մէջն ալ կաղն ի կազմ երկու մաքի վրայ տարախուած, այսինքն՝ թէ քու անմահ հոգւոյդ բարելաւութեանը վրայով մեծ փափաք մը ունենաս, բայց նոյն ժամանակը անիկա ապահով վիճակի մը մէջ զնելու համար անհոգ մնաս, ամեննեին չզարմանաս որ տարւոյն վերջն ալ ինքնինքդ անանիներուն հետ պիտի գտնես, որոնք Աստուծոյ հոգին ունայն բանի տեղ գնելով՝ սրտերնին կարծրացուցին, կամ անանիներուն հետ՝ որոնց նորհք գտնելու աւենը ալ լմնցած է, ու բրածնուն փոխարէնը առնելու օրերնին սկսած է:

« Օնողքներ ալ կան՝ որ իրենց սիրուն զաւկը ները բոլորախինին պատած է, և կարելի է որ անոնք անանկ զաւկըներ են որ՝ Աւետարանին տուած միփթարութիւններն ու յոյսերը ամենելին չեն գիտեր. և թէ որ պատահի աս զա-

ւակասէր ծնողացը՝ որ աս տարուանը մէջ ան իրենց սիրուն տղցը մէկուն հողը դրուելու յուշ ղարկաւորութեան սդալի հանդէսին գանուելու պարտաւորին, և կարելի է սրտերինին չդիմանայ աս ցաւերուն, և ըսեն թէ ինչպէս կրնանք դիմանալ զաւկէ մը զրկուելու ցաւուն։ Շվարիտ է որ չես գիտեր թէ աս տարին ինչ պիտի հանէ քու և զաւկըներուդ դիմացը. բայց ինչ որ ալ ըլլայ, քու պարտգտան է որ «Տէրոջը յուսաս ու բարութիւն լնես»։ ըսել կուզեմ թէ՝ նայէ որ քու ամենամեծ ջանքդ ըլլայ անոնց հոգեկոր օգուտը յառաջ տանիլ, ու Տէրոջը յուսան որ ինքը քու ըրած ջանքերդ պասկէ իր օրնութիւններով։ «Խորէն կըսեմ, ինչ որ ըլլայ քեզի գալիքը թող ըլլայ, անոնց գիմացը ելլու պատրաստ գտնուելու կողմանէ՝ ասկէ ուրիշ յարմար ճամբայ մը չկայ։ Ասանկ ջանք ընելով կրնաս յուսալու տեղ ունենալ թէ՝ զաւկըներուդ փրկութեանը համար արդիւնք մը ըլլայ. և թէ որ աս կեանքէն ալ բաժնուելու ըլլան, յոյս կրնաս ունենալ թէ խաղաղութիւն ունենան մահուան ատենին։ Բայց դիցուք թէ ասանկ չըլլայ բանը, և աս աշխարհէս բաժնուին՝ առանց ետենուն բաւական վկայութիւն ձգելու, թէ հանքերձեալ կենաց համար պատրաստուած են. իրաւ որ ասանկ ըլլալով ալ պիտի միսիթարուիս, մտածելով որ անոնց փրկութեանը համար կրցածդ արդեամբ ըրած ես։

Հատ Վրիստոնեաներ կան, որոնք քանի որ իրենց ներսի դին, և Աստուծոյ եկեղեցւոյն ու աշխարհին վրայ կը նային, չեն կրնար վախենին բռնել թէ՝ ներկայ տարւոյն մէջ ինչ պիտի երեան ելլէ առջենին։ Գուն ով Վրիստոնեայ՝ քու ներսի գիդ կը նայիս, քու սիրտգ, և կը տեսնես որ աս աշխարհիս այնչափ փակած է և հոգեկոր բաներու անտարբեր, և քանի քանի ցած և զգայական ու պիղծ բաներու հակամակիտութիւն ունի, որ կը վախնաս թէ չըլլայ որ աս տարի քու հոգեկոր վիճակդ շատ անպտուդ ըլլայ գնուէ, թէ որ յիրաւի բոլորովին ողբալի անկման վիճակի մը չերթայ բանը։ Հատ ուրախ պիտի ըլլամ թէ որ Ճիշդինքնիքը ասանկ վտանգի մը մէջ նշմարես. և հաւատա խօսքիս, որ քու մի միայն ապահովութիւնդ ան է՝ որ նոր աշխուժութիւն

մը ստանաս, և Աստուծոյ վրայ գնես յոյսդ։ «Տէրոջը յուսան ու բարութիւն ըրէ», և գուն չպիտի խայտառակիս, ու քու թշնամիներդ ալ քեզ յալթելու կարող չպիտի ըլլան։ «Տէրոջը յուսան ու բարութիւն ըրէ», և գուն քու բուլորտիքը աւելի պայծառ ըստ մը պիտի ձգես։ և չնորհքով զօրութեամբ և միսիթարութեամբ պիտի զարգանաս ամէն օր։

Եւ վերջապէս՝ ուր է ան ճշմարիտ Վրիստոնեան որ կարող ըլլայ նայիլ իր բոլորտիքը եղած հաւատքին թուլութեանը վրայ, և կամ բոլորովին խաւարին ու մահուան ճամբուն մէջ գտնուող միթօնաւոր հոգիներուն վրայ, առանց աս ցաւալի հարցմանքը ընկուլու թէ՝ աս տարուան արդիւնքը ի՞նչ պիտի ըլլայ, մաքուր և գործնական Վրիստոնեութեան յառաջադիմութեանը նկատմամբ։ Վրդեօք աս հիմակուանի սիրող խորունկ քունէն պիտի արդնանան. արդեօք այն խուռն բազմութիւնը՝ որ յաւիտնական թշուառութեան աշխարհը կը դիմէ, պիտի գառնայ իրեն գացած աս սոսկալին ճամբէն. արդեօք Վրիմնիքը ուրախութիւն պիտի ըլլայ՝ գարձի եկող բազմաթիւ մեղաւորներուն վրայ, կամ թէ Ախօնին ճամբաները տակաւին սուգ պիտի բռնին, և հոգեկոր մահը հը հանդիսա պիտի թագաւորէ։ Վրդեօք կը ռապաշտութիւնն ու բոլոր մոլար կրօնիները աս տարի ալ իրենց առջի եղած վիճակնուն մէջ պիտի մնան. արդեօք Խորայէլն մնացորդները իրենց մերժած Մեսիային գառնաւու յառաջադիմութիւն մը պիտի ընեն, կամ թէ աղքաց վրայ տիրած խաւարը՝ մասնաւորապէս Վրեահամին մերժած զաւկըներուն վերայինը, հիմա աս ատենին պիտի սկալին զգալի կերպով մը փարտատիլ։ Աս ամէն հարցումներուն ուրիշ պատասխան մը տալու չեմ համարձակիլ, եթէ ոչ՝ առկէ առաջ քանի մը անդամ յիշուած աստուածային պատգամին խօսքը։ Ասիկա մտածէ թէ՝ որչափ ալ որ այն հոգեկոր վերանորդութեան մեծ գործը, թէ հոս և թէ աշխարհիս ուրիշ ամէն կողմերը յառաջ կ'երթան՝ Աստուած է ընողը, և ճշմարտապէս գործնալի իրն է. բայց և այնպէս տակաւին աս ալ կայ որ՝ մէկ կարեոր մորով մը անիկա քու գործդ ալ է, ով Վրիստոնեայ ըստուղ. և թէ որ Աստուծոյ եկեղեցին անգործ կենաւու ըլլայ, պարապ տե-

զո՞ւ յուսայ թէ գործը յառաջ պիտի երթայ : Երթնցի՛ր ուրեմն և մեծ ջերմեռանդութեամբ աղօթքի պարապէ , և աւելի ժիր ու աշխոյժ եղիր ան մեծ գործին յառաջադիմութեանը համար ջանք ընելու , ձեռլնտուութիւնդ աւելցուր գրամական նպաստներու մասնակից ըլլալու կողմանէ , ու գիտնասոր՝ քանի որ դուն աս ընթացքը կը բռնես , հաստատապէս վստահ կրնան ըլլալ որ Տէրը պիտի յաջողէ , ու աղէկ արդիւնք յառաջ քերէ : Դործին յառաջ երթալուն վրայ ամենեւին մի վախնար , թէ որ դուն հաւատարիմես : Վու բոլորտիքդ գտնուածներէն շատերը և խիստ շատերը իրաւ որ՝ որոնք աղօթք ընելու յօժարութիւն մը չունէին , պիտի տեսնես որ անոնք ալ քեզի պէս աղօթք կ'ընեն , և Զօրաց Տէրոջը բանակին մէջ նոր զինուոր գրուեր են . անոնք հճամբաներէն ու ցանգերէն՝ պիտի գան , և ուրախութեան ձայներ պիտի լսուին Աստուծոյ եկեղեցւոյն մէջ . քանզի իր որդիքն ու աղջիկները՝ ազգաւոր թշնամիներուն գէմօղնութեան պիտի գան՝ Տէրոջը պատերազմը պատերազմելու . և նոր նոր լուրեր պիտի առնուի աշխարհիս ամէն կողմերէն թէ չկայ այնչափ հինգած մնապաշտութիւն մը , և այնչափ խորին խաւար մը , և անբուժելի մոլեկան սովորութիւն մը . այլ ՚ի վերայ այսր ամենայնի պիտի լսուին թէ անոնք կրնան փարասիլ , և ան ալ զդալի կերպով մը , Աւետարանին զօրաւոր լոյսին միջոցով :

ԿՈԱՊԵՇՏ ՄԸ
ՀԱՄԵՍՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Նդկաստանի հարուստ Պիրահմաններէն մէկը , շատ ժամանակ ըներ որ՝ իր որդին Քարոզիչնը հոգաբարձութեանը յանձնեց , աս արտաքոյ կարգի խօսքը զրուցելով : «Տէր , ձեր Առորք Դիրքը կարդալէս ետև՝ համոզւեցայ որ Ճմարիտ կրօնքը անոր մէջ պարունակուած է : Ես կարողութիւն չունիմ անոր պատուէրները կատարելու : Բայց աչա իմ որդիս , առ անիկա քու զաւկիդ պէս կրթէ , քու սեղանէդ կերակրէ , ու ՚իրիստոնէութեան մէջ վարժէ» : Ես ատենը 5,000 թալէու (150 հազար զուրուշ) տուաւ , որ իր տղուն կրթութեանը հարկաւոր ծախքերը հոգայ :

ՍՈՒՐԲ ԳՐՈՅՑ
ԱՍՏՈՒՃԱԱՅԻՆ ՃԱԳՄԱՆԸ ՎՐԱՅ
ԵՎԱԾ ՓԱՍՏԵՐՈՒՆ
ՀԱՄԱՐՈՍ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ :

Աս նիւթիս վրայով շատ գիրքեր գրուած են զնապան քրիստոնեայ ազգաց մէջ , և քանի մը հատոր գիրքեր պէտք էր , որ միայն Առողք Գրոց Ճմարիտ ըլլալը հաստատելու համար բերուած փաստերը՝ բոլանդակապէս աննոց մէջը ամիսովուէին : Բայց մենք հիմա միայն պիտի ցոյց տանք համառօտիւ ան փաստերուն ինչ ըլլալը , որ ՚ին և ՚իոր Կտակարաններուն աստուածային հեղինակութեամբ ըլլալուն վրայ՝ լուսաւորեալ հաւատացեալ մը հաւատք ընձայելու կը վստահէ :

1. Աստուածային Յայտնութիւն մը ըլլալը կարեւէ : Աս բանը յայտնի կ'երևայ Աստուածոյ ամենակարող և ամենիմաստ ըլլալէն . և ամէն մարդ պարտաւոր է հաւատալու որ՝ ՚ինիկա կարող է , թէ որ ուզէ , իր կամքը մարդոց յայտնելու :

2. Թէ որ Աստուած կարող է իր կամքը մարդոց յայտնելու , հետեւար կարող է ինքը անտարակցոյ ան կիրպով ընել՝ որ վստահացընէ մարդիկը թէ իրմէն եղած է ան յայտնութիւնը . ոյսինքն՝ ինքը կարող է ան յայտնութեան Ճմարիտ ըլլալը հաստատել , ուղարկի իր զօրութիւնը ցոյց տալով : ՚ինչև անգամ Աստուածեանները կը խոստովանին որ՝ Աստուած ինքնինքը յայտնած է մարդոց , մէկ չափով մը , Արարշագործութեան վկայութիւնով . և ո՞վ կինայ ուրանաւ հրաշքներու վկայութեան միջոցով նոյն բանը ընելու կարողութիւնը : Արդեօք հրաշք մը ընելը , ոչինչէն աշխարհք ստեղծելէն աւելի տարօրինակ կամ անկարելի բա՞ն մըն է :

3. Աստուածային յայտնութիւն մը ըլլալը հաւատական է : Արարիչը՝ բանական և կրօնական ընութեան ձիրքերով զարդարած է մարդը , Աստուծոյ հետ հաղորդակցութիւն ընելու և իր մի միայն երջանկութիւնը յԱստուած գտնելու ընդունակ : Ուրիմն շատ հաւանական է որ Աստուած՝ մարդուն հետ խօսած ըլլայ անանկ կերպով մը , որ անոր բանական և կրօնական ընութիւնը զարգանայ :

4. Աստուածային յայտնութիւն մը հարակառու պատմութիւնը կը վկայէ որ՝

լոկ մարդկային բանականութիւնը չկրնար Աստուծուց կամքը ճիշտ գիտնալու հասնիլ : Հին Փիլիսոփաներուն ամենէն գիտնականները՝ բոլորովին տգէտ էլին թէ՛ Աստուծոյ բնութիւնը ինչէ, և թէ՛ մենէ ինչ կերպ պաշտօն մատուցանել կը պահանջէ . և մասնաւորապէս թէ՛ մեղաւոր մարդուն հետ հաշտուելու ինչ միջոց որոշած է, կամ մեղքին ինչպէս ներում կ'ըլլայ: Ոչ ալ գիտէին թէ՛ աս տեղմեր փափաքելի ծայրագոյն բարին որն է, և ոչ ալ թէ՛ աս ներկայ կեանքէն ետև ինչ ըլլանք պիտի: Ենոնք ճիշտ գիտութիւն մը չունեին հոգւոյն անմահութեանը վրայ, և ոչ ալ ապառնի իննաց վարձուց և պատժոյը վրայ: Բնութիւնն ու բանականութիւնը աս նիւթերուն նկատմամբ կը լուն: ու թէ որ խօսին ալ՝ այնքան մութակնարկութիւններ կ'ընեն, որ ամենեւն մէկ էրական գիտութիւն մը չեն տար: Ուստի բացարձակապէս հարկաւոր է որ Աստուած յայտնութեամբ մարդոց հետ խօսէր:

5. Հին և Կոր Կտակարանները աս տեսակյայտնութիւն են: Հին և Կոր Կտակարանները կազմող գիրքերը՝ իրենց համար աս պահանջումը ունին, թէ տարբեր ժամանակներ, ու տարբեր մարդոց ձեռքով գրուած են: Հիմա երկու բանի կարօտ է որ՝ ասոնց աստուածային ծագումն ունենալը հաստատուի: Կախ ապացուցուելու է որ՝ ան գիրքերը գրողները Աստուծոյ հեղինակութեամբն ու անոր առաջնորդութեամբը գրեցին. և Երկրորդ որ ան գիրքերը՝ որոնք հիմա մեր ձեռքն են, անոնց գործքն են, և մեզի հասած են անփոփոխ կերպով:

Ենկեղծ և անխարդախ մտքի տէր եղող որ և իցէ մէկը՝ անկարելի է որ Մովսէսին կամ Քրիստոսին լրած հրաշքները տեսներ ու չչամուզուեր, թէ Աստուած Ճշմարտապէս անոնց հետն է: Մովսէս՝ Խարայէլացւոց օրէնք մը տուաւ, որուն համար կ'ըսէր թէ Աստուծմէ ընդունած է: Աս պահանջման հաստատութեանը համար՝ մէկ խօսքով կարմիր օչովը բաժնեց, և ապառաժքարէն ջուր բխեցուց, և ասոնց նրաման շատ ուրիշ բաներ ալ ըրաւ՝ որոնք մի միայն Աստուծոյ կարողութեամբը կրնար ընել: Քրիստոս՝ ու նաև իր աշակերտները, կոյրերուն աչքը բացին՝ միանկ մէկ հրաման մը տալով, անբուժելի հիւանդութիւնները ըստնտցուցին, և մեռածներուն յարութիւն տուին: Բնաւ մէկ

մարդ մը չէր կրնար՝ թէ որ կամօք Ճշմարտութիւնը ընդունելու դէմ գնել չուղէր՝ աս զարմանալի ապացոյներուն ականատես ըլլար, և մէկնիր միտքը չպառկէր, թէ Աստուած աս մարդոց ձեռօքը կը խօսէր: Ուրեմն աս հրաշքները աշքով տեսնողները՝ ամենահաստատ վկայութիւն ունենալու աստուածային ծագմանը վրայ: Բայց մէկն ի՞նչ գիտէնք թէ որ հիմա մէր Աստուածաշունչ ասսանկ հրաշքներ եղան: և թէ որ եղան, ի՞նչպէս գիտէնք որ հիմա մէր Աստուածաշունչ ըստած Ուրբ Գիրքերը՝ ան հրաշքներն ընտղները գրեցին: Ուեզի նկատմամբ ասոր ապացոյցը պարագաներ ե:

1. «Կոր Կտակարանն զրեանքը՝ Ճիշդ աննշն ատենը, և անոնց հեղինակն ըլլալու պահանջում ունեցող մարդոց ձեռօքը գրուած ըլլալը՝ կ'ապացուցուի ան օրէն մինչեւ աս մեր օրերը հասած շղթայաշար վկայութեամբը: Որ և իցէ մէկուն ձեացընելը թէ՛ աս գիրքերը նոր նարուած են, վերջին աստիճանի յիմարական և արտառոց է: Աս գիրքերուն մէջն վկայութիւն բերած են, և տեղտեղ անոնց կը գիմեն և ակնարկութիւնն ըրած են, թէ՛ Քրիստոնեաց և թէ՛ Հրէայ ու Հեթանոս շատ մը մատենագիրներ, Պողկարպոսին օրերէն սկսած որն որ Յովհաննէս աւետարանիշին աշակերտն էր, մինչեւ աս օրուան օրս:

2. Մայուն յիշատակութիւն ամէն ատեն կային՝ աս գիրքերուն մէջ պարունակած պատմութեան Ճշմարտութիւնը վկայելու: Օսոր օրինակ, ան գիրքերը կը քարոզեն որ Մկրտութիւնն ու Տէրունական ընթրիքը, Քրիստոսին սահմանուած էին որ՝ մշտնջնարար կատարուին իր Երկեղեցւոյն մէջ. և ըսուածներուն համեմատ կը գտնանք՝ որ աս արարողութիւնները անկէ հետէ ամէն ատեն կատարուեցան: Թէ՛ որ ան գիրքերը՝ ուրիմն, հինգերորդ դարուն գրուած ըլլային՝ օրինակի աղագաւ, տարակցոյ չկայ որ ան ատենէն առաջ ասանկ արարողութիւններ չպիտի կատարուէին. և հինգ դար առաջ անոնք կային ըսելը, պիտի յայտնապէս երևան հանէր իրենց խարերայութիւնը: «Կոյն բանը կրնայ ըսուի նաև եկեղեցի սահմանուելուն և եկեղեցական կարգաւորութիւն հաստատուելուն վկայու: Աս փաստը կ'ապացուցանէ վճռաբար թէ՛ ան գիրքերը որ ատենուան դրուածք է որ կ'ըսուին, Ճիշդ ան նոյն ատենին զրուածքն են:

3. Առջի գարերուն Հեթանոս և Հռէայ մատենագիրները՝ աս գիրքերուն իրենց ատենը կայ ըլլալուն կը վկայեն, ու նաև Քրիստոսի և Ծռաքեալներուն հրաշագործութեանցը, ՚ի հաստատութիւն անոնց աստուածային հեղինակութեանը: Հովսեապոն ու Հրէից Ուալմուտը կը պատմեն: Քրիստոսի բաս հրաշքները, և կը խոստովանին անոնց Ճշմարիտ ըլլալու: բայց Ուալմուտը անոնք մոդական զօրութեան կ'ընծայէ: Կելոս, լուսիան, Պորփիւր և Յուլիանոս՝ որոնք երկրորդ, երրորդ, և չորրորդ գարու մարդիկ են՝ ամէնքն ալ Ըստուածաշունչն դէմ զրեցին, պոլ կ'ապացուցուի թէ իրենց օրովք կար. և իրենց բոլը առարկութիւններուն մէջ բնաւ. մէկ հեղմըն ալ Առուրը Գրոց վաւերական ըլլալուն դէմ խօսք մը եղած չէ, ոչ ալ հրաշքներուն Ճշմարիտ ըլլալուն դէմ. միայն Ուալմուտին պէս՝ ասոնք ալ հրաշքները կախարդութեամբ եղած կը սեպէին:

Եւ կընայ աս ալ ըսուիլ ընդհանուր կերպով՝ որ եթէ աս հրաշքները իրօք չեատարուեցան, անոնց սոււտ պատմութիւն հրատարակելը՝ ճիշդ ան նոյն ատենը ու մի և նոյն տեղը, ամէն կողմանէ հակասութիւններ պիտի երեան հանէր: Բայց և ոչ մէկն ալ ուրացաւ անոնց Ճշմարիտ ըլլալը:

Առւետոնիոս, Տակիսոս և Պլինիոս՝ որոնց ամէնն ալ շատ հաշակաւոր Հռովմայեցի մատենագիրներ են, և որոնք երկրորդ գարուն ըսկեղզները կային, վկայութիւն կու տան քրիստոնէութեան մէկ քանի գլւաւոր իրողութիւններուն՝ թէպէտ և իրենք Հեթանոս էին:

Ուրեմն մննք խիստ համոզիչ վկայութիւններ ունինք՝ թէ ան գիրքերուն վաւերական ըլլալուն կողմանէ, և թէ հրաշքները իրօք կատարուելուն՝ անոնց աստուածային հեղինակութեամբ ըլլալը հաստատ վկայելու համար:

4. Առուրը Գրոց ամէն կողմը մարդարէութիւններով լցուն են՝ որոնք ապագային վրայ գիտութիւն մը կը պարունակին, և շատ անգամ ալ խիստ հեռաւոր ապագայի մը վրայ՝ որ միայն Ըստուծոյ կը վնաբերի գիտնալ, և որոնց որ ինքը կը յայտնէ: Օրինակի համար կրնանք աս տեղ յիշել Երևմիայ լը. 28 համարը, ուր տեղ Քաղցեացիներէն Երուսաղէմի առնուիլ կը նախաձայնէ. և իթ. 10 համարը, եօթանասուն տարի գերութիւն ընելէն

ետև, Հրէից նորէն Երուսաղէմ գառնալը: Ըսանկալ Եսայի խդ. 28 համարը՝ ըլլալու բանին վայով 160 տարի առաջ մարդարէութիւն կ'ընէ, ան մարդուն (Կիւրսին) անոնն ալ յիշելով՝ որ տակաւին ծնած ալ չէր, որուն միշոցով որ պիտի Հրէաները գերութեանէ ազատէին, և իրօք ալ ապագեցան ինչպէս որ Եղբար կը յիշէ առ. 2, 3: Խիստ շատ մարդարէութիւններ կան, և որոնց կատարումը կրնայինք ցուցընել բայց համաստութեան համար հոստեղ չենք յիշեր զանոնք: Եսոնց մէջէն՝ Հրէից ապիտին և Քրիստոսի գալստեանն ու մահուանը վրայով եղած մարդարէութիւնները, ամենէն երևելիներուն կարգէն են:

5. Քրիստոնէութեան զարմանալի կերպով տարածուիլն ու յաջողութիւն գտնելը՝ քանի մը ձկնորսներուն քարոզութեանը միջոցովը, և բոլը աշխարհիս քաղաքական կառավարութեանց կամացը, և մարդոց նախաղարմանցը դէմ, աստուածային զօրութեան մը գործն ըլլալը ցոյց կու տան:

6. Քրիստոնէութեան գերազանցութիւնը՝ ՚ի մասին իր վարդապետութեանցն ու բարոյական կանոնացը՝ որ և իցէ ուրիշ զրութեան մը հետ բաղդատելով, և նաև անոր առջի տարածուներուն բնութիւնն ու կենաց վիճակը մէկ տեղ առնելով, յայտնի կը ցուցընէ թէ ինքը Ըստուծմէ եկած է: Յունաստանի և Հռովմայի բոլը Փիլիսոփաները՝ կարող չեղան ասանկ զրութիւն մը նարելու. և արդի Փիլիսոփաներէն մէկն ալ անդամ կարող չէ անկէ անդին անցնիլ, որ և իցէ մասնաւոր բանի մը նկատմամբ: Եշխարհս շարունակ յառաջադիմութեան մէջ է ամէն տեսակ գիտութեանց և արուեստից մէջ. բայց մինչեւ աս օրուան օրս՝ կրօնքին ան մեծ զիտութեանը մէջ, մեր առ Ըստուած ունեցած յարաբերութիւննիս և անոնցմէ ծագած պարտաւորութիւններն ալ մէկ տեղ առնելով, մէկը կարող չեղաւ ըսելու թէ: Եւայէ ես նոր գիւտ մը ըրի՝ որ Ըստուածաշունչն մէջ չկայ: Եսկիա ինչ կրնանք տալ որ մեզ համոզէ, եթէ ոչ աս բանը ընդունելով թէ՝ ան Գալիեայի ձկնորսները և Շառութոյ Առուրը՝ Հռովմէն լարձուած՝ իօսեցան:

Եւ վերջապէս, Քրիստոնէութիւնը մարդուն ինչ ըլլալուն կատարեալ ստորագրութիւնը կ'ընէ, և յատկապէս յարմար է անոր աս իրեն

գտնուած ներկայ պարագաներուն մէջ : Աս աշխարհիս մէջ գտնուած բարոյական չարիքներուն դարձան ընելու, և մարդուն հօգւոցն օքնաւոր բոլոր փափաքները կատարելապէս գոյն ընելու ալ յարմար է : Եւ թէ որ անոր ողին ամէն տնդ տիրէր, աս աշխարհս երկինք կը դառնար :

ԱՌԱՏԱԶԵՐՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

Ըստեմարանին ասկէ առջի թիւովը ցոյց տունք մեր յարգի ընթերցողացը, առաւտաձեռն Եզկեղեցւոց մը մէկ բարի օրինակը, որով աղէկ բացատրուած էր թէ որքան մէծ գումար մը կրնայ հաւաքուիլ Քրիստոնէական դործոց տարածմանը համար, աշխարհային հարստութեան մասին իրօք աղքատ անձններէ երբոր իրենք ճշմարտած Քրիստոնէական ողի մը կը կրեն, ու Քրիստոսի համար ինչնից բան զոհ ընելու յօժարութիւն ունին : Այս անգամ ալ պիտի ցոյց տանք ան ողյն օրինակին տարբեր մէկ տեսակը, բարեկալաւ Քրիստոնէի մը օրինակը յառաջ բերելով որն որ Տէրը այս աշխարհիս հարստութիւնովը օրհնած էր :

Ամերիբայի աս օրերս հրատարակուած օրադիրները կը ծանուցանեն Ախու Եօրք քաղաքին Գիելս անուն երեելի վաճառականին մաշը՝ որն որ շատ տարիներէ ՚ի վեր հռչակաւոր եղած էր ամէն տեսակ մաղասիրական դործոց համար ըրած մեծամեծ բարերարութիւններովը : Իր ըրած կտակին մէջ հետեւեալ կերպով բաժնած էր բոլոր իր ստացուածքը : Կախ և առաջ իր կնոջը ապրուստ մը հոգացեր էր առատօրէն, անկէ ետեւ իր տղոցը ամէն մէկուն 3,000,000 դուռուշ, ու ամէն մէկ թոռանը որոնք 22 հատ են 300,000 ական զուռուշ, ասկէ զատ 150,000 զուռուշալանոնց ամէն մէկուն պիտի տրուի իրենց կտակակատարներուն ձեռամբը, այն պայմանով որ ան ստակը բանեցընելով՝ աւելցընեն ու մարդասիրական գործոց համար գործածեն, ու վերջն ալնոյն պայմանով իրենց ժառանդներուն կտակ ընեն : Ուրիշ աղքականներուն համար ալ կտակաւ ժառանդութիւններ ձգելէն ետքը, հետեւեալ գումարներն ալ զանազան բարե-

պաշտական գործոց տրուելու համար կտակ կ'ընէ :

ԴԱՐՄԱՆ

Ամերիկացւոց Աստուածաշունչը ընկերութեանը 3,000,000

Օտար երկիրներու Քարոզելուն ընկերութեանը 3,000,000

Ամերիկայի աղքատ եկեղեցիներուն Քարոզաց ընկերութեանը 3,000,000

Ափրիկէի Գաղղականաց երկիրները՝ տղոց գաստիարակութեան համար նովաստ 1,500,000

Աստուածաբանութեան համալսարաններուն, կոյրերուն, որերուն և աղքատներուն համար հաստատուած ընկերութեանցը 630,000

Գումարը 11,130,000

Աս գումարներէն զատ՝ Պարոն Գիելս, մեռնելէն քիչ մը առաջ իր անդրանիկ տըղուն ձեռքը Յ միլիոն զուրուշ յանձնեց՝ որ ան ալ նոյն աղնիւ Քրիստոնէական ողին ունի իր հօրը պէս, իրմէն պահանջելով որ աս ստակին շահովը՝ իր յարմար սեպած կերպովը Աւետարանին գործոյն համար ծախը ընէ : և բուն ստակին գլուխը Աստուածաշունչի և Քարոզաց ընկերութեանը տալու որոշուած է :

Ուստի թէ որ այս ստակը, ու մարդասիրական գործոց համար ձգածը, և նոյն մոօք իր թոռներուն յանձնածները մէկտեղ հաշունք, ան ատենը կրօնական և բարեկալաւական գործոց համար իր մահուան ժամանակը տուած բոլոր գումարը կ'ըլլայ՝ 17 միլիոն 430 հազար զուրուշ :

Այս աղնիւ անձը՝ որն որ բարեկալաւական գործոց համար այս չափ առատ ընծաներ ընորհեց, հարկ է զիանալոր՝ այսքան ստացուածքը՝ ոչ ժառանդութիւն մնացեր իր իրեն և ոչ ալ անաշխատ ստացած էր : Ինքը աղքատութեան մէջ ծնած էր . և իրեն ժըրութեամբ գործին մէջ պարապելովը, և համեստ վարքովն ու ծախքի կողմանէ ունեցած չափաւորութեամբը, Աստուած ալ այս չափ չափականներուն կտակ ընացն անցուցած ժամանակը՝ կ'երեայ թացքին մէջ անցուցած ժամանակը՝ կ'երեայ թէ օգտակար ըլլալու ետեւ եղած է և զուտուած փառաւորելու, և չէ թէ իր հան-

գըստութիւնը կնտուլու և զեղսութեան մէջ լողալու՝ որոնց հարստութիւնը դիւրաւ կրնար զինքը ձեռնչաս ընել։ Իր ապրուստը միշտ պարզ և չափաւոր էր, և նոյն ատենը զանազան մարդասիրական գործոց ամէն մէկուն համար 100.000—200.000 դուրուշ կը նուիրէր։ Իր ընտանիկան ծախըը՝ տարին հաղեւ աս ստորագրութիւններէն մէկուն կը հաւասարէր։ Իր բնակարանին մէջ զարդարուն կաչ կարասիք չէր տեսնուեր և իր սեղանը չափազանց կերակրեղէններ, կամմեծածախ փափուկ խորափիներ չէր տեսնուեր։ բայց ինքը միշտ պատրաստ էր իր գանձը մարդկային ազգին կարօտութեանցը առջին բանալու, ու կենաց հացը միլիոնաւոր սովորամահ կորսութներուն խրկելու։

Պարոն Ֆելըս՝ եկեղեցւոյ Սարկաւագ մընէր, ու շատ մարդասիրական ընկերութիւններու մէջ պաշտօն ունէր։ թէպէտ և առևելարական մեծ գործերու մէջ զրադած էր միշտ, բայց և այնպէս ժամանակ կը գտնար՝ ճիշտ որոշուած ատենին, և նախանձաւորութեամբ, իրեն յանձնուած պաշտօններուն վերաբերեալ գործերն ալ կատարելու։ Իր նստարանը բնաւ պարապ չէր մնար։ ոչ կիրակի օրերը եկեղեցւոյ մէջ, և ոչ ալ շաբթու մէջ որոշուած ալօթքի ժողովներուն։

Ինքը աս աշխարհիս մէջ գտնուած շատ մեծամեծ հարուստներէն մէկը չէր յիրափ, բայց տարակուսելի է թէ՛ իր աշխարհօգուտը բարերարութիւններուն չափին հաշխասար արգեօք շատ անդամ եղած է։ Ովկի լինայ ըսել թէ ասոր հարստութիւնը՝ աշխարհային հաճոյքներու, և կիրքերու ու զեղսութիւններու ետեւ իշնալով ծախք ընելին բաղդատաբար աւելի երջանկութիւն տուած չէ իրեն՝ մինչեւ անդամ աս կեանքին մէջն ալ։ Ուստի ալօթք ընենք Աստուծոյ, և յուսանք թէ այսուհետեւ ասանիներուն թիւը պիտի շատնայ, և իրենց ալօթքներն ու ընծաները՝ ալգաց կուպաշտութենէ դարձի գալուն, և անապաշտութենէ տգիտութենէ ու յաւիտենական մահուանէ ազատուենուն միջոց ըլլայ Աստուծոյ օրինութիւնովը։

ԱՐԵԽՄՏՏԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԵԱՅԱ
ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԵՄԱԿԵՄԱՆ ՅՈՒՂԻՄ-ԱԺԸ ՊՈՃԱԿԵՅ մէջ ուղղաւած Տիկնօպայա (Պիգումենեան պարգուցան) ըսուած կոստանդնուպոլիս օրագրէ մը առնեած է, որ կը ցուցացնէ բոլոր Հնդկաստանին մէջ կիմակուան առուենու եղանակ փոփոխութեան մէրը որոնեց յիրաւուի իսկուր ու զարդարուական գողուածութեան մէջ ուղարկուեն մէջ առնեած է։ Այս նամակին գրութեան ըսուածութեան Հնդկաստանուց հնակ է։

Եռ հրատարակիչն Տիկնօպայա օրագրին։ Տէր։ — Մօտերս Ճանչուղիներէս մէկ ծերունի մը՝ որն որ Հինկերուն կարծեացը նայելով՝ շատ ուսումնական մէկն է, Պօմպէ եկաւ։ Եւ հոստեղի բաններուն այժմեան վիճակը կատարելապէս տեսնելով և լսելով, Հիմակուարտագոյ կարգի փոփոխութեանցը նկատմամբ իր շատ գժգոհ ըլլալը ցոյց տուաւ և Հետեւեալ խօսքերը՝ իր տուած զլաւաւոր ծանօթութեանցը մէկ օրինակն է, որն որ ևս ճիշտ գրի առի, որպէս զի՞ Հնդկաստանոցց Հին կարծեաց չետեսովներուն մէջ, մինչեւ ցարդտիրած խոր տգիտութեանը որչափ մեծ ըլլալուն տեղեակ ըլլաս։ Օր մը՝ զանազան մարդոց ներկայութեանը, երկրին վիճակին վրայօք շատ խօսակցութիւններ ընելէն ետեւ ծեր մարդը Հետեւեալ կիրազով խօսքի մտաւ։

“ Ես ապականեալ գարուա մէջ՝ ամէն բան կործանելու վրայ է։ Ճամբաններէ, շոգենաւերէ և ուրիշ ասանց նման բաններէ զատ, բնաւ ուրիշ բան մը ըսուեիր։ Ուր կ'ուզես նայէ։ Եւրոպական հագուստ և Զինու վաճառք իր տեսնես։ Ուր որ երթաս կը տեսնես որ՝ բժիշկներ և զեղարաններ, զարմանալի մեքնաններ, թղթատարութեան գրատուններ, և ապարաններ կան ամէն կողմ։ Ամէն մէկը գիրք մը ունի ձեռքքը, և կը խորի թէ ինքը գիտնականի պէտքարուելու է։ Ենցած օր բարեկամի մը այցելութեան գացի, ու տեսայ որ Բրօդհատուր (օրագիրի մը անուն) կը կարթար՝ որն որ ամէն շաբթու կը տպուի, անանկ մէկու մը ձեռամբ որ բոլորովին անկրօն է։ կամ ստակ շահելու համար, կամ իր մահարեր սիսալանքը ամէն կողմ սերմանելու համար կը Հրատարակէ։ Հարցուցի բարեկամիս թէ՛ ի՞նչ էր կարթացածը, ու ինքը պատասխան տուաւ, թէ երկայն

նամակ մը գրուած է՝ Պիտահմաններուն որբեւ արիներուն կրկին կարդուելը աղէկ ըլլալուն վրայով . ու մէկ ուրիշ մ'ալ որ օրիորդաց դաստիարակութիւնը օգտակարութեան վրայով է . ու նաև երկաթի ձամքու մը վրայով մէկ պատմութիւն մը , և այն և այն : Մտածէ հիմա անգամ մը , աս մարդուն վրայ՝ որ ինք զի՞ւքը Պիտահման կ'անուանէ , ու որքեարիններուն կրկին ամուսնանալուն ջատագովութիւնը կ'ընէ : Ծխտակը ըսկմ , աս նորահնար բաներէն ձանձրացեր եմ՝ որնք օտարականներուն հետ հազորդակցութիւն ընելով սովորեցան : Իրկուն մը հրաւիրուեցայ պատուառը անձանց հիտ ճաշ ընելու , և կը յուսայի թէ մէկ հաւայական այցելութիւն մը ըրած պիտի ըլլամ : Բայց ՚ի զարմացումն և ՚ի զգուանս իմ , բոլոր ժամանակը մէկ Տիհանօտայա ըսուած օրագրի մը վրայ ծախսեցին , որն որ կ'ըսէին թէ հրաւատարակիր է որ՝ Մերու ըսուած լեռ չիայ . ոչ ալ կաթի , մեղքի , և այն՝ եօթն ծովելը . և թէ բոլոր մարդիկ եղածոր պէս ապրելու են անխտիք . և թէ բոլոր Հնդկական կուռոքերը մէկդի թողելու են , ու անտեսանելի յաւիտենական Երաքին երկրագութիւն ընելու են . ու նաև թէ քաւութեան համար բոլոր մեր ըրածներն ու բոլոր ուխտագնացութիւններիս , մեր մեղքերէն չեն կրնար սրբել մեղ ու մաքրել . և թէ մեր անձին արժանաւորութիւնը ուրանալու ենք , և Յիսուս Քրիստոսի վրայ յոյսերինս զնելու ենք , և անոր հաւատարմութիւն ընելու ենք՝ որն որ կ'ըսեն թէ աս աշխարհիս մէկ ուրիշ կողմը և կաւ , մարմին առած : Վերջապէս հարցուցի թէ՝ ասանկ օրագիր մը ո՞վ կրնայ հրատարակել . ու ինձի աս պատախաննեցին՝ թէ և մէկ սահմար մը , (աէր) և ուրիշներն ալ ըսին թէ՝ բարբէսնէր (քահանաներ) են տպագրել տուողները . ընաւ չէի յուսար որ՝ բաները պիտի ասանկ վիճակի մէջ տեսնէի : Բայց ասիկա Քառէ Եռուին է , և աշխարհք ալ անտարակոյս իր չարութեանը պատմաւաւ պիտի կործանի ” :

Մինչեւ աս տեսն ծերունին իր զգացումներով ուժէ ինկած էր : Դադարեցաւ խօսելէն , և երբեմն երբեմն կը մոմնար ինքնիրեն՝ խելքին փշած անյարմար խօսքերը խօսելով , և անանկ կ'երեար որ ուրիշներուն ներկայ ըլլալէն անգէտ էր : Սակայն ժամանակէ մը ետև իր

մտացը ցնորդներէն արթննալով , նորէն առաջուան խօսքը շարունակեց :

“Մտիկ ըրէք ինձի հիմա ” ըսաւ ; Աւ ես պիտի ցոյց տամ ձեզ՝ բոլոր այս չնչին նորաձևութիւններուն արդիւնքը : Մտքերնիդ բերէք նախ և առաջ թէ՝ քանի քանի խեղճ նաւալարներ իրենց գործքէն զրկուեցան շոգենաւերուն պատմաւուլով : Ծնվթատարութեան գըրատուններն ալ ամէն բան ան նոյն աստիճանին հասուցին . ըստ որում երկու անա (ըստակ) վճարելով՝ հարուստն ալ աղքատն ալ միօրինակ կրնան մէկ նամակ մը իրկել Քաշեքաղաքը : Առաջ աս բաներուն մէկն ալ չըկար . հարուստ մէկը՝ իր նամակները կը խըրկէր , ան բանին համար իր քովը գործածուած սպասաւոր մարդոցը ձեռքովով , և աս կ'երպով հարիւրաւոր առուտքի կ'անցնէր աղքատին ձեռքը : Բայց հիմա ասոնց բանը լինցաւ , և զարմանք չէ որ՝ ՚ աթ ինոններէն անդին գըրնուած աղքատ ժողովուրդը , շատ գժուարութիւն կը գտնեն իրենց փորը կըտացընելու : Ծոգենաւերուն առջելը՝ նաւավարները ի՞նչ կրնան ընել : Մէկ երկաթի ձամբու սայլը , հասարակ սայլերուն քանի քանի հատին բանը . կը տեսնէ և անսնցմէ ալ աւելի շուտ + բայց ՚չ մարդ ու ոչ ալ եզներ գործածուելու բան կը գտնուի : Հարկաւ ժողովուրդը սովամահ պիտի ըլլայ : Այս չար հնաբըները՝ բոլոր ժողովուրդոց փորին վրայ դրեր են իրենց ոտքերը : Քանի որ գեղարանը քովը մօտէ՝ ՚ ո՞վ պիտի երթայ բնիկ երկրացի խեղճ բժիշկ մը կանչեւու , և անկէ խորհուրդ հարցնելու . և մամժա հեղ մը քանի հազար գրագիրներ պարագ մնացին , քանի որ այս տպագրութեան հնաբը գործածուելու միաւաւ : Ժողովուրդը շատ աւելի ուսումն սորվելով՝ անհաւատ եղաւ , և Պիտլուներուն անդամ բան մըն ալ չեն տար . անանկ որ՝ Պիտահմաններն անդամ անօթութիւն կը մեռնին : Վւաղ՝ Վւաղ՝ Ընդդիական կարգադրութիւնները մօնելէն ՚ի վեր անթիւ գիւտեր ելան , աղքատը իրենց պարագած գործքէն զրկելու համար : Բաները շատ տարբեր էին առաջնուան ատենները : Ըն ատենը՝ հարուստները իրենց ստակը ինչ և իցէ մէկ կերպով մը ծախիք կը սկզբին : Վամէն նաև շատ գործ կը գտնէին , և ամէն մէկը եր ջանքին փոխարէն արդիւնքը կը քաղէր : ՚ ի-

մա՝ մէկը թէ որ Քաջի երթալու ալ ըլլայ՝
մինչեւ անգամ մէկ ուղեցոյց մարդ մը գոր-
ծածելու կարօտ ալ չէ՝ որ իրեն ճամբայ ցոյց
տայ : Ճամբան ըստ ինքնան հարիւր ուղե-
ցոյցներէ ալ աղէկէ : “Ամանապէս մէկ տպագ-
րութեան մամուլը՝ հազարաւոր գրագիրներու
հաւասար է, և մէկ ձրի գեղարան մը՝ հարիւ-
րաւոր բժիշկներէ : Թաղթատարութեան գրա-
տունը՝ միկօն մը մարդոց գործը կը տեսնէ, և
նաւարանին մէջ՝ ան գործը որ երկու հարիւր
հոգիով մէկ օրը կը լմննար, հիմա մեքենայով
մը՝ մէկ բովէի մէջ կըլլայ կը լմննայ : Ուս-
տի ալ յայտնի է որ՝ ասիէ ետեւ մը երկրին
աղէկութեանը յոյս չկայ բնաւին : Ո՞եր կը-
բոնքը, և բոլոր անոր վերաբերեալ բաները,
ամէնն ալ լմնան գացին : Ենկրօնութիւնը
յաղթանակ կանգնած է, ուր որ ատեն մը հա-
զարաւոր մարդիկ Աւետառ (իրենց կրօնքին
գիրքը) կարթաւ կը սորվէին, հիմա անիկա բանի
մը տեղ չեն դներ, և ուրիշ բան չեն մոռածեր՝
եթէ ոչ Ենդղարէն սորվէլ : “Քահմաննե-
րուն տօնախմբութիւնները լմնան, ու բոլոր
գեշութէնները կը շատնան . ուստի ալ յոյս
չկայ աս երկրէն : Ըմէն բան կործանման վի-
ճակի մէջ է” :

Ես կերպով ծերունին շատ ողբաց մեր ժողո-
վագոց վիճակին վրայ և ու իր բոլորտիքը բոլոր
գտնուողներուն վրայ իր դիտողւթիւնները
տպաւորելու շանք ըրաւ սաստիկ նախանձա-
ւորութեամբ : Հատերը իրեն կարծիքներուն
հաւնեցան : “Ծերունիններէն շատերը՝ պատ-
գամ ալ համարեցան իր խօսքերը, և ըստն
որ բոլոր իր բաժանները, և բաժաններէն աւելին
իրաւ է : Բայց միջին տարւոք երիտասարդ-
ները, և մասնաւորապէս Ենդղացւոց գլորց-
ները կը թուողները, միայն իր երեսը խնդացին
ու ըստն որ ժամանակին ողիէն շատ ետ մնա-
ցած է :

Ի՞նչ գոչ շեշու, յուացարար կնկ մը՝ որ հարուստ
աղնուականի ալ տանը լաթ ըրացողն էր, օր մը տանը
մեծն ըստ հանաչչով մը . “Ուստէ անգամ մը Տէ՛ր իր
թէ որչափ քիչ ստակով երջանիկ կրնայի ըստաւ” . “Ո՞ր
շափով խաթուն” ըստ աղնուականը, “Ե՛՛Տէ՛ր իր, հարիւր
թալէու զես կատարելապէս երջանիկ գ'ընէ” . “Ուստէ որ ադ-
շափով բանի կը լմննայ, ես կու տամ քեզի” ըստ պարուն,
և անիջապէս համեց ստակը : “Դժո՞հ կիր առաւ ստակը”
և ուրախանալով ու նորհակաւ ըլլաւով վան կը սայէր
բայց երբոր ճայնը ըլլուելու չափ հեռացաւ Պարոնէն,
ինքնիրէն ըստ . “Ա ան որ երկու հարէւր չառդէլ” :

ՔՍՏՄՆԵԼԻ ՏԵՍԱՐԱՆ

Ուստաց կայսրը՝ իր նաւատորմիղին
քննութեանը հանդէսը տէմնելու երթալով
նաւատորմիններուն և զօրիքերուն կրթութեա-
նը (Աւլը) հանդէսն եղած ատենը՝ երկու
նաւատորմիններուն ըրածները մամնաւորա-
պէս իր ուշաղութիւնը խիստ գրաւեց՝ թէ
անսնց ծշութեամբ կատարած զանազան
խիստ զժար գործերնուն, և թէ զիւրաշարժ
արագութեամբ ցոյց տուած արիութիւն-
ներնուն համար : Կայսրը՝ ասոնց ըրածին
այնչափ հաւնեցաւ, որ Ճիշդ նոյն տեղը՝
մէկը անմիջապէս նաւապէտ ըլլալու հը-
րամն ըրաւ, և միւսն ալ նաւապէտի
տեղակալ : Բայց աս երկուքն ալ չըէայ
էին . և անանկ օրէնք (պատոն) մը կայ որ՝
չըէից համար ումնոց (պալէտ) դնելը
կ'արգիլէ : Նաւատորմիղին ծովապէտը՝ որ
կայսեր քովը կայներ էր, գիտնալով ա-
նոնց չըէայ ըլլալը, իմնցուց իր կայսերա-
կան Վեհափառութեան ըրած հրամանին
կատարուելու զժուարութիւնը : “Բա՛՛”
կանցնց կայսրը . աստիկայ բան մը ըսեւ չէ .
անսնք անմիջապէս թո՛ղ (օքնոագու) ուղղա-
փառ Յունական կրօնքը ընդունին” : Երբոր
աս որոշմունքը իմացուցին ան երկու երիշ-
տասարդ մարզոցը ցաւով և յուսահատու-
թեամբ լիցուեցան, մոտածելով որ յառա-
ջաղիմութիւն և պատիւ գտնելու համար
ասանկ խիստ պայման մը զրուած էր առ-
ջևնին : Եւ գիտնալով որ փաստ ցոյց
տալը՝ կամ տրուած պատիւը ըընդունիլը
պարապ բան է, ինդիրք ըրին որ կայսրը
իրենց հրաման չնորչէ որ աւելի ճարտար
գործերով իրենց ճարպիկութիւննին ցոյց
տան . որովհետեւ ըստն՝ տակաւին մեր շատ
մեծամեծ բանները ընեսաւ կայսրը : Եղա-
շանքնին ընդունելու շնորհք ընելով կայս-
րը՝ անսնք նաւուն կայմին մերի ծայրը
ելան, երկուրը մէկզմէկու պըլլուեցան,
և իրավ գլուխցին, և մէկ տեղ ծովը նետ-
ուեցան ու անյայտ եղան :

ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՓՐԻԿԻՆ ՄԷՋԻ ԱՌԻԽԾՆԵԲԸ

Եկեղիել հողմբը պարզող ճամբորդին մէկ հետեւ առաջաւած առաջին թիւն է ու առաջ առ առ պարզունակ պարզունակ է:

Այս կողմի քարոզիչներէն մէկը՝ կ'ըսէ , լեռնային կողմերը ճամբորզութիւն կ'ըներ . ու ան գիշերը իշեան ընելու տեղը համելքն առաջ մութը կոխեց : Խրենց սայրին եղները արձրկեցին որ երթան ան տեղուանիքները արածին . և իր հիափի Օգենդացի սպասաւորը՝ գետակէ մը քիչ մը ջուր բերելու գնաց : Բայց հոն հասաւ չասաւ ահու գողի մէջ ինկաւ ու սարսափեցաւ մը նայ՝ գետին գիմացի կողմը մեծ առիւծ մը տեսնելով : Կ'երեայ թէ աս գաղանը՝ կամ ջուր իմելու եկեր էր հոն և կամ իրեն կերակուր ընելու որս մը գտնելու համար : Օգենդացին աքը շարունակ գաղանին վրայ տնկած էր , նմանապէս առիւծն ալ իր աքը առոր վրայ : Ու եղած տեղերնին գէմէ գէմ կեցած անթարթափ աչօք իրարու երես կրնայէին : Խեղճ մարզը վախուն չէր կրնար ետ զառնալ ու փախչէլ , որ չըլայ թէ աս սոսկալի գաղանը իր ետէն իշնայ ու զինքը փառատէ , որ տարակոյս չկայ թէ շատ դիւրին բան մըն էր իրեն համար : Բայց ինչ ըներ չէր պիտեր , շուարէր մաշցեր էր : Վերջապէս որոշեց որ քաջասարափ ու ջանք ընէ գաղանը անկէ վռնտելու : Ուստի ծռեցաւ գետնէն քար մը առաւ , ու ետքը ձեռքը վեր վերցընելով քարը գէպի անոր նետելու պէս ըրաւ , իմացընել ուղելով գաղանին թէ ուշիա հիմն Ծղամ՝ մէկ քայլ մը ուրդդ գէպի ի աս կողմը թէ որ առնես , աս քարը շիտակ ճակտիգ պիտի զարչնեմ : Եւ որչափ ալ որ չենք գիտեր թէ արդեօք աս ահագին գաղանը իրաւ քարէն վախցաւ՝ թէ չէ , այս սայդ է որ՝ մարզուն վրայ յարձակելու սիրտ չըրաւ . բայց չփախաւ ալ : Խոյլ ընդ հակառակն գիշերն ի լուս մութ տեղը կեցան մնացին . ինեղ Օգենդացին ամէն բարէ մահը աչքին առջն կը աեսնէր , և անանկ կու գար իրեն թէ հիմա մէկէն իր հզօր թշնամին վրան պիտի յարձակի , ու զինքը փառուի : Վերջապէս արշակուր ծագեց :

գարար ան ատենը՝ ինչպէս որ գաղաններուն սովորութիւնն է որ իրենց որչերնին (Յ) կը մտնեն , աս խեղջ Օգենդացիին ահարկու գրացին ալ կամաց կամբայ առնել սկսաւ գետին միւս կողմէն . և ինքն ալ աս գիու կողմէն ուրախութեամբ ետ դառնալով վագեց շուառով՝ Քարոզիչն քոմի եւ կաւ՝ գլխուն եկած փորձանքը , և անկէ աշղատիլը պատմելու . որն որ արարակոյս չկայ թէ շատ մտմոռութի մէջ ինկած էր , իր սպասաւորին բոլոր գիշերը երեան չելելուն :

Այս կողմերը բնակող՝ Քարոզիչներուն մարդոցը մէկն ալ իրօք կրնայ ըսուիլ թէ առիւծներուն բերնէն ազատեցաւ . որովհէ հետեւ չէ թէ ան սոսկալի գաղանը իրեն որսը բռնեց միայն , այլ գլուխն ալ բերնին մէջ առաւ : Բայց հիմա պիտի հարցընես թէ ինչպէս ուրեմն ազատեցաւ ասանկ վտանգաւոր վեճակէ մը : Վեղի ըսեմ որ մի միայն աղօթքով եղաւ իր ազատութիւնը : Դա նիկէլը առիւծներուն բերնէն ազատող ամենամակալ Ծատուծոյն ազաղակեց՝ որ իրեն ալ ողորմի , ու առիւծին բերնէն զինքը ազատէ : Ու իր բուն պատմութեանը նայելով՝ կ'ըսէր թէ բոլոր կեանքին մէջ անանկ չերմեռանդ աղօթքը մը ըսած չունէր բնաւ : Իր ալօթքը լուեցաւ . և շնորհակալ կ'ըլլար Ծատուծոյ՝ որովհէտեւ ուրիշ ինչ և իցէ մէկ բանի մը չէր կրնար տալ , ան ահարկու գաղանին բերնէն ասանկ հրաշալի ու իսկեթէ դուրս կերպով մը ազատուիլու :

Ուրիշգէտպը մըն ալ պատահած է , որ հիմա պիտի պատմենք թէպէտեւ ասիկա միւսին չափ հաճելի չէ : Ծատ ժամանակ չէ որ իրեք հոգի և մէկ տղեկի մը մէկտեղ ճամբորդութիւն կ'ընէին : Գիշերը վրայ գալով դուրս տեղ մը պարտաւորեցան քնանալու : Մարդոցը երկութքը զատ պառկեցան , և մէկն ալ տղուն հետ ծածկոցի մը մէջ պլլուեցան պառկեցան ու մէկտեղ կը քնանային : Քունենին տարեր էր , նայիս որ անդիէն առիւծ մը եկեր՝ և մարզն ու տղան մէկտեղ պլլուած ծածկոցը խածեր էր : Մէկ կերպով մը ծածկոցը գաղանին բերանը թռողելով , իսքաղնին ազատեր են աս սոսկալի վտանգէն : Ասոնք վազն ի վազը կ'երթային միւս ընկերն սերնուն քով , վտանգի մէջ ըլլալնին իմացը :

նելու . և դեռ խօսքը բերաննին էր , մէյմըն
ալ ինչ կը նայիս թշնամին եկաւ հասաւ ,
խեղճ մարդուն վրան յարձակելով վեզէն
խածաւ ու սպաննեց . իր ընկերներուն միայն
աս չափ մը կրցաւ կանչել ողորմելին , զար-
կէք , զարկէք . ու թէ և հրացանը պարպեցին
աս ամենի գաղանին վրան ու գետինը փոեցին
իր գին , բայց վահան որ խեղճ ընկերնին ազա-
տելու ատենն անցեր էր : Եւ կասկած ընելով
որ չըլայ թէ մօտ տեղերը ուրիշ առիւծներ
ալ գտնուին , շուտով մը աս տեղէն երկու
մարդիկն ու տղան ձգեցին փախան : Բայց
հետևեալ առտուն նորէն եկան որ իրենց
ընկերին մարմինը թաղեն , և տեսան որ գի-
շերուընէ եկեր մեռելին մարմինը և նմանա-
պէս առիւծին ալ կերեր էն իր անագորոյն
ընկերները :

Կարելի է որ աս պատմութիւնը կարթա-
ցողներէն ոմանք լսած ըլլան աս խօսքը որ
կ'ըսէն թէ՝ առիւծը պոչէն կը բռնուի . և
մտքերնուն ըսեն որ՝ ասանկ բան մը կարելի
չէ թէ բնաւ եղած ըլլայ , կամ թէ մարդ մը
համարձակի ասանկ բանի մը փորձ ընելու :
Բայց աս բանիս ստուգութեանը վրայով
Քարոզիչն մէկը հետևեալ պատմութիւնը
կ'ընէ . ու կը հաստատէ թէ՝ ան խօսքը սուտ
պատմութիւն մը չէ . այլ իրօք եղած է , և
կ'ըլլայ : Խնքը կ'ըսէ թէ՝ աս կերպով ա-
ռիւծ բռնելը , Քալիհարի կողմէրը՝ ուր որ
ինքը կը կենար , անսովոր բան մը չէ : Հա-
րաւային Ըփրիկէի կողմէրուն առիւծները ,
երբեմն շատ վնաս կը հասցնեն ան տեղաց-
ւոց . որովհետև հեղ մը որ մարդու միս
ուտեն , ալ անկէ ետե համը բերաննին կը
մնայ և ուրիշ կենդանսաց միսը չեն ախոր-
ժիր ուտելու , այլ շարունակ կը փնտուն որ
ան տեսակ որս մը գտնեն : Ուստի աս վտան-
գաւոր այցելուներուն ձեռքէն ազատելու մի
միայն ձարը՝ երկրացիք սա հետևեալ կեր-
պով գտած են :

Ծատ մը մարդիկ մէկտեղ ընկերանալով
կ'ելեն առիւծին եղած որչը՝ ապառաժներուն
կամ անտառներուն մէջ կ'երթան կը գրտ-
նեն , ու ամէնքը մէկ տեղ ժողվուած քովէ-
քով կու գան , ու գաղանին զադրած տեղին
մօտը կ'երթան : Երբոր իրեն կը մօտենան
մէկէն անոնց վրայ կը ցատկէ . աս միջոցին

իրենք ալ ասդին անդին կը ցրուին առջե-
էն : Բայց անիկա ցատկելուն պէս՝ անոնց-
մէ մէկ քանին կը վազեն իր ետեկի կողմը , և
պոչին տակէն այսինքն մարմնոյն կցուած
տեղին որչափ որ մօտէն կը ընան ձեռք ան-
ցընել , անկէ կը բռնեն . ու բոլոր ուժով-
նին վեր վերցընելով , ետեկի ոտքերը գետ-
նէն կը կտրէն : Վսիկա չէ թէ միայն գա-
զանը կը վախցընէ , բայց ատեն մը վնաս
մը հասցընելու ուժով կը կտրի . և քանի որ
աս վեճակին մէջ մնալով ինք զինքը պաշտ-
պանելու անկար կ'ըլլայ , միւս ընկերներ-
նին իրենց նիզակներով ու բիրերով (ա-
նապահ) վրան կը վազեն , ու շուտով կը սպան-
նեն գաղանը : Վս բանը չէ թէ իրենց մէկ
հաճոյքը կատարելու՝ կամ զուարձութեանը
համար կ'ընեն , այլ ինքնինքնին պաշտա-
նելու համար :

Վս տեղի երկրացիներուն մէկուն տունը
սկսեց առիւծին մէկը այցելութեան գալ . և
ան տունէն քանի մը հոգի իրեն զոհ եղան :
Ուստի տանը մեծը՝ կարգը իրեն ալ գալէն
վախնալով , որոշեց որ հնարքով մը աս գա-
զանը սպաննէ : Ուստի կարծելով թէ վր-
տանգաւոր այցելուն մէկ այծի ձագով մը
պիտի գոհ ըլլայ՝ գուանը գուրսի դին կա-
պեց ինքն ձագը , և ինքնալ հրացանով մը
ներսը կը սպասէր՝ որ անիկա իր ընթրիքը
ուտելու պարապած ատենը , զարնէ սպան-
նէ : Վոկւծը եկաւ . ու տեսաւ իրեն հա-
մար պատրաստուած խայծը (էէմ) , բայց
ինքը ալ աւելի անուշահամ կերակուր մը
կ'ուզէր : Եւ մարդու միսին համն առած
ըլլալուն , այծին ձագին տիրոջը միսն ուտե-
լը աւելի նախապատիւ կ'ընարէր : Ուստի
խեղճ ու մայոզ ձագուկին վրայէն ցատկե-
լով , արձակ համարձակ տունէն ներս մտաւ :
Բայց մարդը հոն չէր : Ծատ խելացու-
թիւն ըրերէր որ՝ տանիքին վրայ ելած կը ս-
պասէր , և աս տեղէն առիւծին շարժումը
կը գիտէր . ու հոն կեցաւ սպասեց մինչեւ որ
տունը աչքէ անցուց , և մէջը մարդ մը
չգտնելով ձգեց գուրս ելաւ : Վն ատեն մար-
դը մէկէն նշան առաւ իր հրացանով , և
մէոցուց . և բարեբաղկութեամբ թէ իր
կեանքը , և թէ խեղճուկ ձագը ազատեց :

ՈՒՏԵԼԻՔՆԵՐՈՒ
ԵՒ
ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

♦աց, միս, ու բանջարեղէնէ խառն կերակուրը՝ անոնց ամէն մէկը զատ զատ ուտելէն աւելի աղէկ է. միսը՝ ախորժակը կը կշապընէ շատ կատարեալ կերպով, ու միւս երկուքէն ալ աւելի երկար կը քշէ կուշտ մնալը. և թէ որ հային ու բանջարեղէնին մէջ որոշմունք մը ընել պէտք ըլլայ, հացը աւելի ընտրելի է: Որսի միսերուն շատը դիւրամարս են: Կովու և ոչխարի խորոված միսը, բոլոր ուրիշ միսերէն դիւրամարս է: Յիշելու արժան բան մըն է ասիկա որ՝ ստամբախն ամէնէն յարմար եկածը, խորոված և կասկարայի վրայ եփած միսն է. ասիկա՝ զանազան տեսակ կերակուրները որքան ժամանակի մէջ մարսուելը փորձելով գտնուած է: Զօրորիխնակ՝ կովու կամ ոչխարի, խորոված կամ կասկարայի վրայ եփած միսը, թերխաշ ըլլալու որ ըլլայ, երեք ժամու մէջ կը մարսուի:

Ժամ

Խոզու միս,	կասկարայի վրայ եփած.	3 ½
Ըղած խոզու միս.	.	4 ½
Խոզու միս,	խորոված.	5 ¼
Ըղած կովու միս,	խաշած.	4 ½
Խաշած հաւկիթ (թերխաշ).	.	1—3
Հատ եփած կամ տապկած հաւկիթ.	.	3 ½
Որսի միս,	կասկարայի վրայ եփած.	1 ¾
Հորթի միս,	կասկարայի վրայ եփած.	4
Հորթի միս,	տապկած.	4 ½
Ոիրտ,	տապկած.	4
Բրինձ.	.	1
Կաթ,	եփած.	2
Հաց.	.	3 ½

Պտուղներն ու բանջարեղէնները, երկուքէն մինչեւ չորս ժամ կը պահանջն մարսուղութեան չամար՝ իրենց տեսակին ու եփելու կերպին համեմատ: Խորոված կամ փուան մէջ եփած գետախնձորը, և հումկալամբը, երկուք ու կէս ժամուն մէջ կը մարսուին: Բայց խաշած գետախնձորը՝ ժամ մըն ալ աւելի կը պահանջէ. և խաշած կաղամբը՝ վրան քացախ անցընելով, չորս ժամու կէս:

Ես տեղ կը տեսնենք թէ ինչու համար կան բաներ որ ստամբախն չեն յարմարիր. անոնք որ երկար ատեն կը մնան ստամբախն վրայ, ամէնէն աւելի դժուարութիւն կուտան: Կանաչեղէնները՝ ընդհանրապէս ամէնէն քիչ սուունդ կուտան. և սովորաբար առանց բոլորովին մարսուելու ստամբախն կ'անցնին: Ես բանը քանի քանի անդամ ապացուցուած է ան հիւանդներուն վրայ, որոնց ստամբախն ճիշդ վարի դիէն՝ ծակ բացուածէր: Երբոր միս կերած ըլլային՝ անիկա բացուածքին հասնելու ատենը, միս ըլլալը չէր որոշուեր. բայց շոմին, ստեպղին, և ուշ բիշ խոտեղէնները շատ քիչ փոխուած կ'ըլլային: Բաժկականութեան հետեղողներէն մէջ կը կ'ըսէ թէ՝ «իմ հիւանդներուս բացուածքէն՝ աղցանը, չորս սալորը, խնձորը և շոմինը միշտ ժամէ մը ետև երեան կ'ելլար. որ ընդհանրական՝ մսեղէն կերակուրները բնաւ երբէք երեք ժամէն առաջ չէին հասներ բացուածքին աեղը: Կ'երեայ թէ մարսական գործարանները՝ խոտեղէններէն աղատելու փափաք մը ունին, որնցմէ որ հիւթ մը չեն կրնար հանուիլ, և միշտ կը կծկին անոնք գուրս վլնտելու. և գիպուածով բացուած ծակը՝ պատեհութիւն մը տուած էր բոլորովին գուրս ընելու. ուր ընդհանրական՝ մսեղէն բանները կը պահէիր, որոնք իր աշխատութեան փոխարէն հատուցում մը կը նային ընել": Եպուրը՝ անդամար կամ դիւրամարս չէ, թէ որ ուրիշ հաստատուն շատկեկ կերաբուրի մը հետ չուտուի. ուր ողողը շատ ապուր կերցընելով կը սնուցանեն, կերպով մը անոնց առողջութիւնը կը վնասուի: Եւրոպայի մէջ՝ աղքատանոցներուն մէջէն անդամ, լուբիայի ապուրը վերցուեցաւ. որովհետեւ գտան որ՝ տղաքը միջընդերաց հիւանդութիւններու շատ ենթակայ կ'ընէ: Զուկը՝ ընդհանրապէս դիւրամարս է. և անանիներուն համար աղէկ է որոնց որ միս ուտելը շատ գրգոիչ է: Ըղած խոզի միսը, և որ և իցեւ ուրիշ աղած միսին խաշածը չուտելը աղէկ է: Հորթու կամ խոզի միսը, տաք իւղը և կարկանդակեղէն բանները քիչ բանները քիչ շատ գժուարամարս են, և շատ զգութեամբ ուտառելու է:

ՊԵՏՈՒԽՆԵՐՈՒՆ
ՄԵԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Արաբացւոց “Ակետէ ըսուած մէկ յեզին մէջ , ձի մը կար՝ սրուն հռչակը տարածուած էր երկըն հեռաւոր ու մերձաւոր տեղերը . և մէկ ուրիշ յեղին մէջ մէկը կար Տահէր անունով՝ որ շատ փափաք ունէր ասձին ձեռք անցընելու : Ունայն տեղը առաջարկեց որ իր բոլոր ուղարկը , և մինչեւ անդամ իր բոլոր ստացուածքը տայ . և տեսնելով որ տէրը չաճիր աս սակարկութեանը , հետեւալ խորամանկ հնարքը բանցուց վերջապէս իր նպատակին հասնելու մաօք . և որով կը յուսար թէ իր փափաքելն պիտի ձեռք ձգէր : Ուստի որոշեց որ տեսակ մը խոտի ջուրով իր երեսը ներկէ , և հինումին լաթեր հագնի , և իր սրունգները վեզէն կապէ , որպէս զի կաղմուրացկանի մը պէս երեսայ : Աս ամէն պատրաստութիւնները ընելէն ետե՛ գնաց “Կապէրին՝ չիուն տէրովը ճամբան սպասելու , որուն ան կողմերէն անցնելիքը զիտէր ինքը : Երբոր “Կապէրին մօտենալը տեսաւ , իր գեղեցիկ նժոյգին վրայ հեծած , տկար ձայնով մը կանչեց . Ես մէկ աղքատ օտարական մըն եմ , և իրեք օր է որ աստեղէն չեմ կրնար երերալ , որպէս զի ինծի պատառ մը հաց ճարեմ : Մահուան դուռը հասած իմ . օգնէ ինծի , և Երկինքը քեղի վարձահատոյց պիտի ըլլայ : Պիտուինը մարդասիրութիւն ընելով՝ ըսաւ որ իր ձիուն վրայ առնէ ու տուն տանի : Բայց միւս անդգամը պատասխանեց . չեմ կրնար ելլել կայնիլ . ուժու ալ չէ մնացեր : “Կապէրին սիրաը չփիմանալով՝ ձիէն վարիջաւ և քովը տարաւ , ու գժուարաւ ձիուն վրայ հեծուց կեղծեալ մուրացկանը : Բայց Տահէր ձիուն վրայ հեծաւ չհեծաւ մորակ մը (Տահմուզ) զարկաւ ու ձինքեց , կանչելով միւսին որ՝ “Աս ընողը ես եմ , Տահէրը : Ձին առի ու հիմա անով կը փախչիմ” : “Կապէր ետեկն կանչեց որ քիչ մը կանկ առնէ , ու ըսելիքը մտիկ ընէ : Ապահով ըլլալով որ իր ետեկն միւսը չկընար հասնիլ , դարձաւ ու ձին “Կապէրէն քիչ մը հեռու կայնեցուց , որուն ձեռքը նիզակ մը կար : Միուն իմ ձիս առիր՝ ըլ-

սաւ միւսը , որովհետեւ Երկինքը այնպէս
կամեցաւ . կը խնդրեմ որ բարով վայլես :
Բայց քեզի երգում տալ կու տամ որ քնաւ
մէկու մըն ալ չըսես ատիկա ինչ կերպով
ձեռք անցընելլու : Ոշւ ինչու համար՝ ը-
սաւ Տահէր : Անոր համար որ՝ ըսաւ ալ-
նիւ Երապը , ուրիշ խեղջին մէկը կարելի
է որ իբաւցընէ հիւանդ եղած ըլլայ , ու
մարդիկ վախնան անոր օգնելու : Դուն
պիտի պատճառ եղած ըլլաս՝ որ շատ մարդ
չպիտի ուզեն գթութիւն ընել խեղջերուն ,
վախնալով որ ըլլայ թէ միամատոթեամբ
իրենք ալ խարուին , ինծի պէս : Աս խօսքե-
րէն շատ խպնելով , վայրկեանի մը չափ
լուռ մնաց Տահէր . ետքը ձիէն վար ցատ-
կելով , տէրոջը տուաւ անիկա , և Կապէրը
գրիեց ու անոր պլուեցաւ : Վապէրն ալ
իր հետ ընկերացուց զինքը , և իր վրանը
տուաւ տարաւ , և քանի մը օր մէկտեղ կե-
ցան , ու ետքն ալ մինչեւ 'ի մահ իբարու
հետ անքակտելի սիրով բարեկամացան :

Ա Ն Ս Ո Վ Ո Ր Խ Մ Ե Լ Ք Մ Ը Հ ա մ ո ն ց ՚ ի վ ե ր ի ս բ զ ե ն բ ը
դ ի ն ե մ ծ լ ու թ ե ն ա տ ո ւ ա ծ մ է կ մ ը , գ ր ա ւ (պ է ս) ր ս ն ե ց ո ր՝
ա շ ե ր թ ը կ ա պ ա ծ կ ր ն ա յ զ ա ն ա զ ա ն տ ե ս ա կ ո դ ե լ ց խ ն մ ի ք ն ե ւ-
ը ը ի ր ա ր մ բ ո ր շ ե լ : Խ ր բ ո ր ա ս ո ր փ ա ր ձ ը ը ր ի ն և ի ր ե ն ա ռ ջ ւ ը լ
ք ր ե ր ի ն գ ի ն ի , օ ղ ի , պ ր ա ն տ ի , ո ո մ և ո ւ ր ի ւ զ ա ն ա զ ա ն ի ս ը-
մ ի ք ն ե ր ը , ա ն ո ն ց ա մ է ն մ է կ ո ւ ն ձ ի ք ի ն ի ն չ ը լ լ ա մ ի ն զ ո ւ ա-
ց ե ց : Վ ա ն ե ն ի ն ե տ ք ք ա ւ ա շ մ ը ջ ո ւ ը տ ո ւ ի ն ի ր ե ն . ո ւ ս ա փ
ա ռ ա ւ ա ս ո ր ա լ Հ ա մ ը ն ա յ ի ց ա ւ , կ ա ն կ ա ռ ա ւ , ո ւ ն ո ր է ն
Հ ա մ ը ն ա յ ի ց ա ւ , ո ւ կ ր ի ն ն ո ր դ ր դ ա ծ ու թ ի ւ ն ը ն ե ւ ս կ ս ա ւ , և
վ ե ր ջ ա պ է ս գ լ ո ւ մ ը է ր ե ր ց ը ն ե լ ո լ ը ս ա ւ ՚ Պ ա ՚ ր ո ն ն ե ր , ե ս գ ը-
ր ա ւ ա կ ը թ ո ղ ո ւ մ : Ա ս տ ե ս ա կ խ մ ն է ք ի ս ո վ ս ո ւ թ ի ւ ն չ ո ւ-
ս ի մ ո ւ :

— Արևելեան Խամբիքաներէն մէկը՝ անդորրաւութենէն յառաջ եկած ճանձրակի սրտնեղութեան ախտէն առանցուած ըլլալով, ոմանք իրեն խորհուրդ տուին որ եթէ երջանիկ մարդուն մէկը գտնայ, ու անոր շապիկը առնէ հազիք, շուտ տով ան ախտէն պիտի բժշկուի : Ըստ առեն փստուելէն ետև հազիք ասանկ երջանիկ մը գտնուեցաւ, և վահ որ ան ալ այնքան արքատ էր՝ որ շապիկ մը չունէր :

Անոնեւէն օր Մը ԱՌԱՋ . Հարէից Խղիազար առ Անոնով մէկ Ուաբրին զսաւ , “Ո՞նքունելէն օր մը առաջ Աստուծոյ դարձի” : Իր աշակերտները սա ինօսքին զբայ իրեն հարցուցին թէ , “Խնչպէս մարդ մը կրնայ գիտնալ իր մեռնելու օրը” : Եսոր զբայ ինքը սա պատասխանը տուաւ : “Ո՞քը մն այսօք Աստուծոյ դարձիր , քանզի կարելի է որ վաղը մեռնիս” :

ԱՀԵԱՐՀԵՍ ՄԵԶ ԳՏԵՈՒԱՅ ԲԱՋՄԱՄԱՐԴՈՒԹԵԿՆԵ
ՈՒ ՏԱՐԲԵՐ ԿՐՈՆ ՔՆԵՐԸ

Պերլին՝ մօտերս հրատարակուած պաշտօնական յայտարարութենէն՝ հետեւալ աղեւակը առնուած է, որ կը ցուցընէ նրկրագունդիս վրայ գտնուած բազմամարդութեան՝ կրօնական նկատմամբ բաժանմունքը:

Ա. ԱՇԽԱՐՀԻՍ ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՐԱՏՈՒԹՅԱՆ	ԱԾԽԱՐ	ՔԸՆ	ՄՀԱՆ	ՄԱՐԴԱՆԱՄԱՐ ԱՆ ՄԻԿ ՄԴԱՆ
Եւրոպա	260,000,000	183,000		1,444
Ասիա	610,000,000	839,000		727
Եվրիկէ	108,000,000	546,000		198
Ամերիկա	50,000,000	639,000		78
Առաջարարական	2,600,000	170,000		12
Գումար	1,030,000,000	2,377,000	Միջև թիւ	434

Բ. ԱՇԽԱՐՀԻ ԿՐՈՒԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

	ԲՆԱԿԻՉՔ	ՔՐԱՍՈՒՆԵԱՅՑՔ	ՄԱՀՄԵՏԵԿԱՆՔ	ՀՆԴԻՔՔ	ՀՐԱՄՔ	ՀԱԹԱԽՈՍՔ
	ԱՎԼՈՒ	ԱՎԼՈՒ	ԱՎԼՈՒ	ԱՎԼՈՒ	ԱՎԼՈՒ	ԱՎԼՈՒ
Եւրոպա	260	252	5 $\frac{1}{2}$	—	2 $\frac{1}{2}$	—
Ասիա	610	4	53	550	3	—
Եվրիկէ	108	2	52 $\frac{1}{2}$	—	2 $\frac{1}{2}$	51
Ամերիկա	50	45	—	—	—	5
Եռաստրալիա	2	1	—	—	—	1
Գումար	1,030	304	111	550	8	57
Ըստ չափիքն	29.51	10.77	53.40	77	—	5.53

Գ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆՔ

ԱՐՈԹԵՍԹԱՆԴ	ԱՐԵՒԲԵԼԵՆ		ԱՐԵՒՄՏՏԵԼԵՆ		ԳՈՒՄԸՐ
	ԿԱՄ ՅՈՒՆԵԿԸՆ	ԿԱՄ ՀՈՎԱՄԵԿԸՆ	ԱՐԵԼ	ԱՐԵԼ	
Եւրոպա	60	66	126		252
Ասիա	—	3	1		4
Հայկել	—	1	1		2
Հայքագա	19	—	26		45
Հուատըլիա	1	—	—		1
Դումար	80	70	154		304

Տարակոյս չկայ որ այս ցուցակը շնոր Պերլինի ուսումնականք՝ Ճիշտ տեղեկութեաններ առնելու շատ փափաքած էին, բայց և այնպէս յայտնի է որ՝ քանի մը տեղերուն վրայօք միայն ենթադրութեամբ գրած կրնան ըլլալ:

ՄԵծին ԲՐԻՏԱՆԻՍՑԻ
ՆԱՌԱՏՈՐՄԻԴՔ

Պաշտօնական գրութիւններէ կը տեղեւ կանանք որ՝ Մեծին Բրիտանիոյ Միացեալ Թագաւորութեան, ներկայ նաւային զօրութիւնը հետեւեալն է : Արքունի նաւատորմիզը 671 պատերազմական թէ անգործ և թէ գործի մէջ եղող նաւերէ կը բաղկանայ . որոնց ամէն մէկը 2—120 թնդանօթ կը կրեն . ասոնց 178 հատը զինեալ շոգենաւեր 100—300 ձիու ու

ժով , և ամէնն ալ խիստ ընդունուած և ամէնէն աղեկ սեպուած սկզբունքի վրայ շնուռած են՝ պատերազմական գործի ծառայելու հելու համար : Աս նաւատորմիզը՝ որ աշխարհիս երեսը գտնուած որ և իցէ ծովային զօրութիւններէն մեծն է , խաղաղութեան ատեն 35,000—50,000 ուժեղ նաւաստիներ կը գործածէ , 2,000 առոյդ երեսասարդներ , ու 13,000 արքունի ծովամարտիկ զօրք :

Աս հաշվեւէն զուրս են նաև ան նոր շնուռական ու շնուռելու վրայ եղող մեծամեծ պառատակաւոր շոգենաւերը :

ՅԵՆԿ ՆՈՐԵՍՏԻՊ ԳՐԱՅ

Հետեւեալ Արքատիպ Գիրքերը կը գտնուին Բրօթէսթանդից Պօլսոյ Գրքատունը և այս Տէրութեան ուրիշ գլխաւոր քաղաքներուն մէջ գտնուած Բրօթէսթունդից Գրքատունները :

Աստուածաշանչ	Աշխարհաբառ	Միահատոր	Հասարակ կազմով	Պարունակ
		Փառաւոր	"	60
		Ասկեզօծ	"	100
Ճառ Արտին պահպանութեանը վրայ Թաղթակազմ		Կալիով	"	3
Վարք Հելուետացի Բարեկարգչն Օուինկլի			"	5
Կարեսը Հարցումներ և Աուրբ Գրքէն բերուած վկայութիւններով			"	1 : 20
Պատասխաններ				20
Վհճաքննութիւն կամ Վհճնէ ինքնիրգութէ արդեօք Վրիստոնեաց ես			"	1
Պլուխ եկեղեցւոյ . Երկրորդ տպագրութիւն			"	1
Իլահիլէր . Վլահըն Իպատէթինաէ ումումի վէ մախսուսիյէ Ճէմիյէթլէրտէ օգունմագ իշխն :			"	3

Վօտերս պատրաստ ըլլալու գրեանքը

Վոր Կտակարան Գրաբառ
Վրիստիանոսին Ճամբորդութիւնը . Վորոդ որբագրութեամբ վերստին
տպուած և նոր պատկերներով զարդարուած :
Փէյշամպէրլէրին Էօմրիւնիւն նագլիյէթի :
Խմի բագամ քիւչեւք մէքթէալ չօճուգլարը իշխն :

Կտեմարանին Տարեկան գինը 18 զուբուշ կանիսիկ , կամ ամէն մէկ ամսական տետրակին գինը 60 փարայ է :

Դրաբաները իրկուելու ժողովային ժամիւը առանցին վրայ է :
Փօստային ժամիւը ինայել ուղղողերը կինան Տամիստանի որ և իցէ տաղաժիները եղած Բրօնէնանդ գրտածաներուն ուղղ դրանել :